

ևս ոչինչ բարոյական ներգործութիւն չունի թիւրքիայի պէս մի փտած պետութեան վրա և սա յանդգնաբար կարող է Լւրօպային պատասխանել. «դուք ինքներդ էլ ճշնում էք ձեր հպատակ ազգութիւններին»:

Ինքն արեւմուտքը կարօտ է կատարեալ վերանորոգութեան և բարոյական յեղափոխութեան, որպէս զի կարողանայ բարոյապէս ներգործել և արեւելքի վրա: Քանի որ Լւրօպան ինքն ճշնող, ազատութեան հալածող կը լինի, նա ոչինչ բարոյական ներգործութիւն չի ունենայ թիւրքերի վրա, ոչինչ հեղինակութիւն չի ունենայ թէև յետագէմ բարբարոս և անբարոյական նացրած, բայց այնու ամենայնիւ բնածին խելք ու դատողութիւն ունեցող արեւելցու վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՅԻՍՅՈՒՆ

Փետրվարի 27-ին

Ամսոյ 20-ին «Օգոստոս» հիւրանոցում, յոգևոտ սովեցող մի պարահանդէս եղաւ: Ամբողջ հիւրանոցը լի էր բազմութեամբ: Բոլոր տղամականները ծախելուց զկնի շատերին առանց ամսական ընդունելուն և շատերն էլ զրկվեցան տեղ չը լինելու պատճառով: Ինչպէս լսում ենք զուտ արդիւնքը մօտաւորապէս 400 ռ. կը հասնի:

Ամսոյ 25-ին քաղաքային խորհրդարանում 29 իրաւասունների ներկայութեամբ հին քաղաքապետը յանձնեց իր պաշտօնը նոր ընտրված քաղաքապետին, և յոյս յայտնեց, որ նա լաւ պէտք է վարէ իրան ստանձնած պաշտօնը:

Մենք էլ մեր կողմից աւելացնում ենք՝ թէ պ. Գրիգորիան Մոսկովիտները ազատ կը մնայ իր դէմ ուղղված բոլոր խնդիրներից միայն իր խոհմութեամբ, հեռատեսութեամբ և արդար կառավարութեամբ:

Անցեալ 1879 թիւն մանկավարժական թերթի համար կէս տարվայ բաժանորդագիրը հաւաքեցին 3-ական ռ.: Բայց մինչև այժմ ոչ մանկավարժական թերթի երես տեսանք և ոչ մեր տված փողերը յետ ստացանք:

Ամենայն գործ իրան հետեւողներն ունի. այդ բնական է: Անցեալ տարիները «Արարատեան» ընկերութեան անունով մի քանի անձինք փող հաւաքեցին և իրանց գրպաններում պահեցին: Մի քանիսն էլ տեսնելով որ ձայն հանող, հաշիւ պահանջող չը կայ, իրանք ևս հանգանակութիւն արին և փողերը իրանց գրպաններում ամուր պահեցին, կարծելով որ իրանց կը մնայ: Բայց եթէ այդ պարտները, մի քանի օրից փողերը չուղարկեցին ու հարկն է, այն ատենը տոկոսված կը լինեմ նրանց անունները հրապարակ հանելու:

Թեմական վերաեստուչ պ. Գ. Բարխուդարեանցը անցեալ տարվայ օրինաւոր և ապօրինի կարգադրութիւններից զո՞ մնալով այս օրերս ևս չնորհի Ախալցխայի առաջնորդին մի անսպասելի գործ չինեց, այն է, զեռ մի տարվայ դատաւարութեան շրջանը չը լրացած մի նորեկ ուսուցչի դատերը ձեռքից խլեց: Զարմանալի է, որ կամայականութեան և կամապաշտութեան զո՞ հեղած, իրանց պաշտօնին անյարմար մարդիկ երկար ժամանակ մնում են իրանց պաշտօններում: Այսպիսի մարդկանց վրա արդեօք խղճմանք չունի որ և է ազդեցութիւն, որ ազգային ուսումնարանները չը զոհեն իրանց շահերին: Մեր ուսումնարանների վիճակը օրից օր վատանում է:

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Փետրվարի 22-ին

Ամսոյ 1-ին բացվեցաւ Մոսկովայում առաջին ուսանողական համակցութիւնը, որի հիմնադիրն է պատուաւոր քաղաքացի պ. Լեպեշկինը: Պատուական տուն չբեղ զարգացած սեփականներով պատրաստ է ընդունելու իր ծածկութիւն տակ մօտ 50 աղքատ ուսանողներ: Բացի ամենայն տեսակ յարմարութիւններից, որոնցով չէ մոռացել պատուաւոր շուրջապատ շրջապատելու իր մշտական հիւրերի բնակարանը, վերջինները կը ստանան նրանից նոյնպէս մաքուր ճաշ և թէյ: Բնակարանը ունի ընդհանուր սեղանատուն, ծխասենեակ, գրադարան և մի առանձին սենեակ բոլոր ուսանողների քիմիական պարագայութեան համար:

Ով եղել է ուսանող և եղել է աղքատ ուսանող, ով ապրել է նրա անշուք, կիսամերկ և կիսակուշտ կեանքով, նա միայն կարող է արժանապէս գնահատել այդ օրինակելի և բարձր բարեբարութիւնը: Զարգելի նուիրատուի անունը միշտ անմոռանալի կը մնայ ամեն մի ուսանողի սրտում:

Այս հանգամանքը առիթ է տալիս ինձ աւելացնելու մի քանի խօսք:

Շատ ժամանակ չէ, որ մեր պարբերական մամուլը ուղղեց դէպի հայ-ուսանողութիւնը մեղադրական ճառերի մի ամբողջ շարք: Ինչքան չեն գրել, ինչ պահանջներ չեն բարձր ուսանողների վրէժ! Մէկը պահանջում է, որ ուսանողները տակնուվրայ անեն եւրօպական քաղաքականութիւնը և անգլոսթիլիզմատիային մարդասիրական զգացմունքներ քարոզեն, միւսը ծիծաղում է ուսանողների վրա, որ նրանք պարտաւոր լինելով իրանց ներքին կեանքին վերաբերեալ գործերով, անուշադիր են թողնում ազգի վիճակը, երբորդ բարկութեան շանթեր է թափում ուսանողների վրա, որ նրանք իրանց ծակ գրպաններով ու զարգակ փորով չեն հիմնում հայ կապան օրգանն և ի... Եւ այդ կուրիօզների վրա կանգնելու միտք չունենալ կանամ միայն այն, որ մամուլը հասարակութեան ձայն է: Նա անբաւական է ուսանողութիւնից, անբաւական է ուրիմն և հասարակութիւնը: Բայց թող ներուի մեզ հարցնել, ինչ է արել այդ հասարակութիւնը ուսանողութեան համար, որ այդպէս խիստ պահանջող է հանդիսանում դէպի նա: Հետաքրքրվել է նա արդեօք երբ և իցէ իմանալու ուսանողների դրութիւնը, հասկանալու նրանց պէտքերն ու պահանջները: Մտածել է նա արդեօք զո՞նէ մի անգամ իր սեփական ինիցիատիւով օգնութեան ձեռք հասցնելու օտար երկրում աղքատութեան մէջ տանջվող ուսանողական վրա: Բազմաթիւ երիտասարդներ ամենայն տարի լցնում են Ռուսաստանի և մանաւանդ մայրաքաղաքների համալսարանները և ուրիշ բարձրագոյն դպրոցները: Ի՞նչպէս են դուրս տանում նրանք, ինչպէս են «նստա» դրում, —տուէլ է իրան այդ հարցերը երբ և իցէ բազմապատկառ հայ-հասարակութիւնը կուշտ փորով նստել և քարոզներ կարգալ ի հարկէ հնչուրան է: Եկեք, տեսէք, կամ հարցէք ու իմացէք ուսանողների դրութիւնը, նրանց պահանջները և յետոյ ասպարէզ դուրս եկէք ձեր պահանջներով լիքն ուսանողը ըստ է և ձեր զանաւ չէ տանում մուրացկանի պէս իր կեանքի նկարագրներով, այդ չէ նշանակում թէ նա երջանկութեան ու բարօրութեան մէջ է գտնվում: Ապահովէք նրա դրութիւնը նիւթական կողմից, միջոց տուէք նրան չը վատնելու իր մատող թարմ ոյժերը սպորտում ձորելու օրհասական կուշտ, —այն ժամանակը ձեր պահանջները արդար կը լինեն: Գուրս եկէք, հարուստ հայեր!... Լեպեշկինի օրինակը ձեր առաջն է դրած...:

Որքան էլ անուշադիր ու անտարբեր է հասարակութիւնը դէպի ուսանողական պէտքերը, հայ ուսանողը չէ դադարում սիրել իր ազգը: Տաճկաստանից հայի սրտամաշ հաւաքանքները դուցէ ոչ մի տեղ այնքան արձագանք չը գրուեն, որքան ուսանողի վառ և կենդանի սրտում: Զարաշար կը սխալվէք եթէ կարծէք, որ այդ սէրն ու համակրութիւնը լոկ պլաստիկական են: Ուսանողութիւնը գործում է որքան կարող է և որքան հնար է: Նա գրում է, թարգմանում է, զօհաբերութիւններ է ժողովում, հաւաքում է, խօսում է, մտածում է: Գրանից աւելի նա անկարող է անել: Ուսանողը հասկանում է, որ գործելու համար պէտք է մտաւոր պատրաստու-

թիւն ունենալ: Եւ նա կամենում էր պատրաստվել: Նա կամենում էր ուսումնասիրել պատրաստվելու միջոցներից մէկը՝ մարմնի գրականութիւնը, բայց նրան չը տուին այդ միջոցը: Զէք հաւատում է Լեպեշկին:

Այս ամառ ուսանողութեան կողմից եւ մի խնդիր էի ուղղել դէպի մեր հեղինակները: Եւ խնդրում էի նրանցից չը խնայել իրանց աշխատութիւններից մի մի օրինակ ուղարկելու ուսանողութեանը: Եւ համոզված էի որ ուսանողի մի այդպիսի համեստ խնդիրը արձագանք կը գտնի մեր հեղինակների մէջ, այն հեղինակների, որոնք իրանց գրութեանը արձագանք սէր և համակրութիւններ յայտնում դէպի ուսանողութիւնը... Բայց դուրս եկաւ, որ իմ յոյսերս ոչ այլ ինչ էին, եթէ ոչ օպտիմիստական ցնորքներ... Ոչ մի հեղինակ, ոչ մի թարգմանիչ արժան չը համարեցին իրանց փառքի բարձրութիւնից ուղարկելու իրանց գրածները ուսանողի խօսքի վրա: Մի ոչ —հեղինակ միայն, պ. Գրիգ. Բարեանցը համակրութիւն յայտնեց, ուղարկելով Ալեքսանդրապոլից 10 հատոր գիրք ուսանողական գրադարանի համար: Շնորհակալութիւն մեծապատիւ պարտենի:

Այդ զարմանալի ստույգութիւնը ու անտարբերութիւնը մեր հեղինակների կողմից կարելի է բացատրել երկու կերպով: Կամ հայ մարդը առհասարակ սովորութիւն չունի ուղարկելու զարմանելու և մանաւանդ կատարելու լրագրի միջոցով արած առաջարկութիւնները (օրինակները անհամար են), կամ թէ մեր հեղինակների խօսքի ու գործի մէջ ահապին անդունդ կայ: Երկու շատ հնաւ է թղթի միջոցով մարդասիրութեան և փոխադարձ օգնութեան սկզբունքները քաղաքականութեան զգացմունքներ քարոզել, աշխու, բարոյական համոզմունքներ արծարծել...

Հաւատանք դրանց: Ինչ ողորմելի համոզմունքներ են, որոնք հէնց առաջին անգամ իրականութեան հետ հանդիպելիս ջարդվում են, փլուզվում, անհետանում...

Ի՞նչ է դուրս գալիս այստեղից:

Հայ հասարակութիւնը չէ մտածում տալ ուսանողութեանը նիւթական օգնութիւն, հայ հեղինակները մերժում են տալ մտաւոր օգնութիւն, իսկ նրանք երկուսն էլ պահանջում են ուսանողութիւնից ազգի ցաւերին օգնութիւն... Արդարացի է այդ... Պատասխանեցէք...

Ս. Գաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի հաւաքարարի պարտն գրում է մեզ հետեւալով: «Մարտի 1-ին կատարվեցաւ մի օրիորդի յաղարկաւորութիւնը: Որիորդը նախ սովորելիս է եղել Հաւաքարարի Ս. Մարիամեան ուսումնարանում և այս երկրորդ տարին է, որ Գալեանեան ուսումնարանում էր: Հանգուցեալ օրիորդի հայր, պ. Լազար Լեղադարեանց, իր աղկալ յիշատակը անմոռաց պահելու համար նուիրեց երկու տոկոսաբեր տոմսակներ՝ մինը Ս. Գալեանեան դպրոցին, միւսը Կ. Պօլսի «Միացեալ ընկերութեանը»: Երկրորդ կտակի դէմ մենք ոչինչ ասելու չունենք: Բայց առաջինի մասին կասենք որ հայը պէտք է տալ քաղցած ինչ և ոչ թէ կ'ուշտ ինչ: Գալեանեան ուսումնարանը առանց այդ էլ ապահովված է. չենք հասկանում Հաւաքարարի Մարիամեան ուսումնարանի մասին ով պէտք է մտածի: Զը մոռանանք որ Հաւաքարար Թիֆլիսի մի բազմամարդ հայոց թաղ է, որտեղ դեռ մինչև այժմ չը կան հաստատ կազմակերպութեամբ դպրոցներ»:

Մեզ պատմում են, որ Ս. Գալեանեան դպրոցը, որ նիւթական կողմից այն աստիճան ապահովված է այժմ, որ միջոցներից դրամական նպատու է նշանակել մի այլ դպրոցին, ինքն կարծեաւ կարողութիւն չունի իր բոլոր դասատուները տաքացնելու: Վարձապետները վերաբերուն հազած մտնում են դասատուներ և այդպէս են դասեր տալիս: Ինչ պէտք է անեն խեղճ օրիորդները: Նորերումս դպրոցի բարձր դասատան մի օրիորդ մտել է չը տաքացած դասատան մէջ և հիւանդացել է:

Մեզ գրում են Ղազարխանի գիւղից (Շիրակի սահմաններից) որ Ֆրանկիստե տեղ նշանակված Ղազարի նոր նահանգապետ դնելու Գրոման, մտաւ արդէն իր պաշտօնի մէջ և անցաւ այդ նահանգի մի քանի գիւղերի միջով, որոնց բնա-

կիւնները ամեն տեղ ուրախութեամբ նրան հանդիպում և ողջունում էին:

ԼԵՆԿՈՐԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ տեղական վարչութիւնը ուղարկութիւն չէ դարձնում քաղաքի փողոցների անտանելի անմաքրութեան վրա: Փողոցները շատ դւրսութեամբ կարելի էր մաքուր պահել, ասում է թղթակիցը, աչքի առաջն ունելով քաղաքի չորս կողմը եղած առաջին առատութիւնը: Բայց թղթակցի ասածին նայելով Լենկորանի մի փողոց միայն, որտեղ երթեկութիւն ունեն և դրօսնում են վարչութեան ներկայացուցիչները, քիչ թէ շատ մաքուր է պահվում: Լուսաւորութիւն բոլորովին չը կայ փողոցներում և ինքն իւրաքանչիւր խանութատեղ իր դրան վրա կամ խանութի առջև չը դրեն իր հաշուով մի լապտեր, անհնարին կը լինէր անցնել փողոցներում հրկոյեան ժամանակ:

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են: «Փետրվարի 23-ին թէլաւի սբ. Գէորգ Զվէլգալովանի եկեղեցու սենեակում խեղդվեցաւ մի 20 տարեկան երիտասարդ: Միւս օրը, առանց մարմինը զննելու թաղեցին նրան: Արդեօք անձնասպանութիւն էր դա, թէ ուրիշներն են խեղդել նրան, —անյայտ մնաց»:

Մեզ գրում են Թէլաւից և հետեւալով «Տեղիս գործակալը և տէր Արէլ Սուքիասեանց օրերումս եօթ հայաստանցի հայ թշուառներին բաժանեցին իրանց հաւաքած շորերից, տալով իւրաքանչիւրին մի շապիկ, վարտիք, կրկնավարտիք, արխաւուս և չոխա: Նմանապէս մի մի ձեռք շոր մանր երեսաների համար: Ամեն միսին ինչ կտոր: Ընդամենը բաժանեցին 63 կտոր: Այդ մերկ և ինչար գաղթականները քուրդերի ձեռքով հարստահարվածներիցն են: Մի կտոր հացի համար ամենի առաջ խոնարհեցնում էին իրանց գլուխը, ամենքի ոտները պատրաստ էին լիզել: Նրանք կորցրել էին մարդկային պատասխարութեան և ինքնասիրութեան զգացմունքի վերջին նշույլը: Յաւալի էր նրանց վրա նայել: Խեղճերը մնացին այստեղ մի շարքի չափ և յայտնեցին որ գնալու են յինձող Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գծի վրա մշակութիւն անելու»: Թղթակիցը վերջացնում է իր նամակը բանաստեղծի խօսքերով: «Ափսոս քեզ հայոց խեղճի ժողովուրդ, ցիրուցան եղար անմեղ, անխորհուրդ»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Այստեղ թղթախաղը օրից օր աւելի և աւելի է տարածվում հասարակութեան մէջ: Կանայք և օրիորդներ, մինչև անգամ, վաղ առաւօտից իրանց տան տնտեսութիւնը թողած, նստում են թուղթ խաղալու և այսպիսով անցնում են ամբողջ օրը: Մտաւոր զարգացման համար ժամանակ չը կայ: Ամբողջ քաղաքը, աղաներից սկսած մինչև ծառաները՝ բոլորն էլ թուղթ են խաղում ամբողջ օրերը»:

Շնորհակալութեամբ ստացանք այս օրերս Թիֆլիսում տպված մի փոքրիկ հայերէն բրօշուր «Կիւցաղուցք բոտ խորհրդացույց. Հայկ. Արամ, Վահագն, պատկերներ պատմական կեանքից»: Կրթչիլը ստորագրված է չորս տառով Ա. Մ. Ե. Պ. Տպված է Մովսէս Վարդանեանի և ընկ. տպարանում:

Այս օրերս պ. Գ. Պ. Պարզեղանէ հրատարակեց ուսերէն լեզուով իր հետազոտութիւնը վրաց եկեղեցական հրովարտական մասին: Այդ գիրքը պէտք է ծառայի որպէս նիւթ մեղ մօտ լինելու հնապիտական ժողովին: Գրքի վերնագիրն այս է. Грузинские церковные гуджари (грамоты). Գրքի գինը 1 ռուբլ է և տպված է Գլխաւոր Կառավարութեան տպարանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՏՐՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայից լրագրիներին գրում են հետեւալով: Այս օրերս կրկին լուրեր տարածվեցան այստեղ, որ զիտաւորութիւն կայ Բօսնիան և Հերցեգովինան վերջնականապէս միացնել Հաբսբուրգների կայսերութեանը: Տեղական մի կիսապաշտօնական լրագիրը լրառաջնորդող յօդուածի մէջ պարծենում էր:

որ նա յաղթել է Պեշտի լրագրիւններին, ու լրագրիւններն ինքն ինքիս հետ միացնելու մտքից: Մի քանի ժամանակ առաջ զանազան լուրեր տարածուեցան իրապաշտօնական «Pester Lloyd» լրագրում բանակայի և շրջագրի մասին, որոնք ստատիկ մեծ գործերով էր նկարագրւում այդ երկրիւններին կառավարութիւնը Այնտեղի բնակիչների անբաւականութիւնը վերջին ծայրն է հասել, ամեն տեղ մէկ տեսակ խառն է տիրապետում: Հարկերով ծանրաբեռնած է ժողովուրդը, աղքատներին և թշուառներին թիւ չը կայ: Կառավարչական օրգանները բաշխուողներին վատ են վարվում ժողովուրդի հետ, այնպէս որ շատերը ակամայ հարցնում են՝ թէ այժմեան կարգերը ի՞նչով լաւ են առաջնից, և այլն:

Մի քանի օրից յետոյ հերքվեցան այդ լուրերը և դրանց հեղինակին մեղադրեցին սուտ լուրեր տարածելու մէջ: Իսկ այժմ, «Pester Lloyd» ինքն է հանգէս գալի որպէս ջատագով բանակ և շրջագրի մասին: Պեշտի լրագրիւնները շատ միացնելու գաղափարին: Պեշտի այդ օրգանին շտապեցին, ի հարկէ, միանայ և Վիեննայի կառավարչական լրագրիւնները, որոնք անապարձութեամբ կրկնում են, որ նրանք առաջ ևս շատ անգամ խօսել են «միանալու» անհրաժեշտութեան մասին: Քանի որ, կրկնում են այդ լրագրիւնները, այդ երկրիւնները չեն միանայ կայսերութեան հետ, ոչ ոքից չէ կարելի պահանջել այնտեղի գործերի համար պատասխանատու լինել, որոնք կարող են կանոնաւորվել միայն այն ժամանակ, երբ Աւստրո-Սերբիական կիսնայ որ նա աշխատում է իր սեփական և ոչ թէ օտար նահանգների համար: Այդ լրագրիւնները շարունակում են խօսել, ի հարկէ, Աւստրիայի քաղաքակրթիչ գերի մասին, որը կը տարածի լուսաւորութիւնը միայն իր սեփական նահանգներում: Մի խօսքով Վիեննայի կառավարչական լրագրիւնները մեծ անորոշութեան ստացել և թշուառ բանակայից և հերքեցողից, երեւի, մօտիկ ապագայում զոհ կերթան նրանց անորոշական: Արդեօք Հարբուրգի կայսերութեան հետ վերջնականապէս միանալուց յետոյ կը բարեփոխենք կարգերը, մենք համարձակուում ենք կատարել: Աւստրիան, իր երկու տարվայ կառավարութեան ընթացքում ցոյց տուեց իր շնորհը. պաշտօնական հաստատաւորութիւնները յայտնի է որ բնակիչները այնտեղի կառավարութեան լծի տակ սատակ ճնշվում են: Դիմադրի է առաքել, ուրիշ, որ վերջնականապէս չը միանալու պատճառով չէ կարելի արդար և օրինաւոր վարչութեան ձև մտցնել այդ նահանգներում: Ո՞ր էր այդ բանին արգելք դնում, ի՞նչ էր կառավարութիւնը ինքը բարի ցանկութիւն ունենալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հասցից հեռագրում են, որ Մարտիայի մէջ կաթոլիկ մոլեռանդ ամբար յարձակվեց մեծ օգիտուն երկ աղօթատան վրա և յափշտակելով աղօթատան մէջ գտնվող բոլոր իրեղենները այրեց նրանց: Այնուհետև ամենքը ժողովեցին մայր-եկեղեցում և օրհնութիւն ընդունեցին կաթոլիկ քահանաների ձեռքից: —Նկատուից հաղորդում են, որ Իսկիա կղզու վրա երկրաշարժ եղաւ, որ բաւական մեծ վրաններ հասցրեց, ոչնչացնելով բազմաթիւ բնակարաններ: Մի քանի մարդիկ սպանված են: —Վախկոտներից հեռագրով հաղորդում են, որ փետրվարի 21-ին (մարտի 5-ին) Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների նոր նախագահ Հարիսը ընդունեց իր պաշտօնը: Կեռ ևս

նոր միստրոնները կազմված չէ, Լափում է որ Բլէնկ նշանակվելու է պետական քարտուղար, Լինկոլն, նախկին նախագահի որդին, նշանակվելու է պատերազմական մինիստր, Ուիլզոն ֆինանսների մինիստր:

—Ինչպէս յայտնի է Ֆրանսիան վճեց մեծ ցնել օրիորդական միջնակարգ աշխարհական ուսումը: Այժմ ազգային ժողովի առաջարկութեամբ պէտք է իննսկիս Ֆրանսիայում կանանց ուսուցչական գործերը, իրական միջնակարգ գործերի համար ուսուցչուհիներ պատրաստելու համար:

—Լրագրիւնների մէջ կարդում ենք, թիւրքաց և պարսից կառավարութիւնները պայման կապեցին իրանց մէջ խառն յանձնաժողով նշանակել սահմանի հարցը վճելու և ֆիւրդիստանը խաղաղացնելու համար:

—Մարդկից գրում են լրագրիւններին, որ այնտեղի նոր միստրոնները վճեց թագաւորի հաստատութեանը առաջարկել հետեւալ նախագծերը. —բոլոր վիսուսականներին, որոնք հալածված են քաղաքական յանցանքների համար, ներումն չորհել, չբարեբախտուող ռազմիկ համալսարաններին բեկտորներին 1875 թ-ից քաղաքական համոզմունքների համար արքայազն լուր պրոֆէսորներին վերադարձնել արտօրից, և մէկ հրաման հրատարակել Մերսեդէս իշխանուհուն Աստուրիական իշխանուհու տիտղոսը տալու մասին: Կորտեսները կը հաւաքվեն միայն բիւրոգիտութեան համար և յետոյ կարձակվեն:

—«Temps» լրագրի Մարդիկ թղթակիցը գրում է, որ Մարդիկում ապրող ֆրանսիացիք վրդովված էին այն բանի դէմ, որ գուշ Զեր-նանդ-Նուենցի ի պատիւ Ալֆոնս թագաւորի երեք քոյրերի տուած ամուսնութեանը, ուր հրաւիրված էր և ֆրանսիական զեպան ծովապետ Ժորժ, ներկայ էր և նախկին մարշալ Բադեն, Բադեն և նրա կինը ընդունված են մարդիկ զեպան արխաթոսկրական շատ տներում և զիպոմանները շատ անգամ նրանց պատահում են հասարակութեան և օպերայի մէջ, բայց ոչ որ այս բանին նշանակութիւն չէ տալիս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՂԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Այսօր աւազու ի Տէր հանգուցեալ թագաւոր Կայսրի մարմնի գմանելը աւարտած է: Մարմնի ընկնելուց յետոյ յայտնվեցաւ որ թագաւորի կազմուածքը առողջ գրութեան մէջ էր: Ընշառութեան դժուարութիւնը, որ վերջին տարիները զգում էր Կայսրը, առաջ էր գալիս թոքերի անօթիւնի լայնանալուց: Կայսրը գրված է Պրէօքստէնսն գնդի համադրեալով, առանց շքանշանների, անկողնակալի վրա, պարագմունքի սենեակում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Լրագրիւնները հաղորդում են: Քանի մօտենում էր Չմեռնային պալատին, թագաւորը ու շքեղ կորցնում էր, արիւնի կորուստից: Կրողիցովի և Մարկուս բժշկները առաջիններն եկան և փորձեցին կապել արտերիաները: Նրանցից յետոյ եկած բժշկապետ Բօտկին ուշադրութեամբ գնում էր սրտի բաբախումն և վերքերը կապելուց յետոյ ասեց որ սրտի հնչիւնները աւելի լսելի են լինում ծծմբաթթու էֆիրի սրտիկուց: Հիւսութիւնը վերականգնվեցաւ: Խոստովանահայր Բօմանով օգուտ քաղեց յարմար քաղից և հաղորդութիւն տուեց թագաւորին: Յոյսերը նորոգվեցան: Ուղարկեցին սրիւն տեղադրութեան գործիքը բերելու: Բայց ծակառակները այլապէս էր տնօրինել: Բօտկին սկսեց նշմարել սրտի զարկերի աստիճանաբար թուլանալը: Հնչառութիւնը նուազում էր, վերջապէս ժամը 3-ին և 35 րօպէին թագաւորը փոխվեցաւ յաւիտենականութեան: Այսօր մօտ 3 ժամին թնդանօթների ձայնը ազդարարեց Ալէքսանդր III-ի գահ բարձրանալը: Խորին սուգ է նշանակված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Այսօր հասա գեներալ Սկօբօլեֆից ուղարկված պօղպօրուշիկ Կառլֆան, բերելով իր հետ

մանրամասն զեկուցումն արշաւների մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 մարտի: Երրորդ ներքին 5% փոխառութեան տիրաժը:

ՆՁՆ	ՆՁՆ	տարած գումար
սերի	տոմս	
6305	27	200,000
821	32	75,000
7320	10	40,000
6329	10	25,000
14165	41	
5824	40	10,000
8390	28	
4527	11	
11237	37	
17203	35	8,000
4184	41	
18360	44	
1139	44	
2438	42	
4725	29	
12462	33	5,000
3540	47	
3452	20	
3220	48	
11515	29	
12598	33	
18042	28	
13469	12	
16101	50	
15329	16	
19225	40	
11643	25	
11653	36	
11431	6	1,000
9736	15	
19386	5	
12997	30	
1063	33	
5280	17	
14494	32	
12623	50	
3398	36	
9692	21	
3918	43	
10437	46	

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետեւեալը: Երէկ 1 ժամին կէսօրից յետոյ թագաւորը և թագուհին, թագաժառանգի և Կայսերական ընտանիքի անդամների հետ, դուրս եկան ներքին սենեակներից: Կանգնելով Նիկոլաեվսկան դահլիճում, թագաւորը գիւղեց գեներալներին և օֆիցերներին նշանաւոր խօսքերով, որոնց մէջ յայտնվով ի Տէր հանգուցեալ թագաւորի անունով երախտագիտութիւն նրանց հաւատարմութեան համար, հաճեցաւ յայտնել, որ ինքն ժառանգութիւնը ընդունելով այսպիսի ծարրօպէին, կը ծառայի Ռուսաստանին նրա բարօրութեան համար, և յոյս ունի գրաւել նրա սէրը: Նոյնպէս հաւատացած է, որ գործերը կը ծառայեն իր ժառանգին նոյն հաւատարմութեամբ և եռանդով, ինչպէս ծառայում էին հանգուցեալ թագաւորին: Վերջը նորին Մեծութիւնը կրկին անգամ յայտնեց իր ծնողի կողմից շնորհակալութիւն նրանց ծառայութեան համար: Այս խօսքերը շարժելով արտասովոր ներկայ գրեմիդներին, նրանք միաձայն «ուրա» կանչեցին: Պաշտօնական երգում ընդունելուց յետոյ, թագաւորը մտաւ դահլիճը, ուր գտնվում էին պետական խորհրդի անդամները և սպիտակ և յայտնեց իր երախտագիտութիւնը նրանց ծառայութեան համար և յոյս յայտնեց, որ նա դրանց մէջ կը գտնի նոյն հաւատարմութիւնը, որպիսին վայելում էր իր հանգուցեալ ծնողը: Կառնալով սպիտայի պաշտօնականներին, թագաւորը յայտնեց, որ նա թողնում է նրանց իր անձի մօտ: յետոյ գնաց ներքնասենեակները: Բարձրագոյն ուկազով հրամայված է բոլոր հաւատարմ հպատակների հետ զիւղացիներին ևս երգեցնել տալ թագաւորին և ժառանգին հաւատարմութեան մէջ: Կալանաւորված չարագործը Տիւփինի քաղա-

քացի է Նիկոլայ Իվանով Բիսակով ազգանունով, 29 տարեկան է, իր ուսումն սկսեց Վիսկոլսկան դաւառական դպրոցում, շարունակեց իր ուսումը Չերկասովցի ռէալական դպրոցում: Սկսեց 1879 թ-ի նա մտաւ հանքարանական դպրոցը, բայց 1880 թ-ի գեկտեմբերից սկսած դասախօսութիւններին չէր յաճախում: Վերադարձ 18 անձինքներից երկուսը մեռան, թիկնապահ Կոզակ Մալեվիչ և անյայտ կոչման մի մարդ մօտ 30 տարեկան հասակի: Սորան վերաբերում են երկրորդ ուսման արձակելը, որով սպանվեցաւ թագաւորը: Սպանութիւնից յետոյ տեղ տեղ ցրված էին յեղափոխական պրօկլամացիաներ: «Порядокъ» լրագիրը լսել է, որ թագաւոր Կայսրի հանդիսաւոր թաղումը կը կատարվի վախճանից երեք շաբաթ յետոյ: Այսօր, մարտի 3-ին, ժամը 8-ին երեկոյան հրամայված է ժողովել Չմեռնային պալատում նշմարանից դէպի մեծ եկեղեցին մարմնի հանդիսաւոր տեղափոխութեան հանդիսին ներկայ գտնվելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի, ժամը 8 և 50 րօպ: Երկուցեան: Ներքին գործերի մինիստրը յայտնում է ընդհանուր դիտութեանը, որ Կայսրի կեանքի գէժ եղեռնագործութեան զխաւոր գեկաւարդներից միւր այն անձն է, որ կալանաւորվեցաւ փետրվարի 27-ին: Նա խոստովանվեց իր մասնակցութիւնը յանցանքի մէջ և այդ հաստատում է նոյնպէս եղեռնագործութեան քաղեցին կալանաւորված Բիսակով, որ այդ յանցանքի կատարող էր, զցելով կառքի տակ առաջին ճայթող ուսմը: Այն անյայտ անձն, որ, ինչպէս երեւում է, զցել երկրորդ ուսմը և որ ճայթման տեղի վրա ինքն էլ մահվան հարուած ստացաւ, Բիսակովի վկայութեամբ, որին ցոյց տուին սպանվածի դիակը, եղել է նոյն իսկ դրա ընկերակիցը: Այն բնակարանը, որտեղից Բիսակով և նրա ընկերը ստացել էին ճայթող ուսմանը, գտնված է մարտի 3-ին զիւրը: Բնակարանի տէրը, երբ ներկայացան նրա մօտ աստիճանաւորներ, անձնասպանութիւն գործեց, իսկ մի կին, որ նրա հետ բնակվում էր, ձեռքաւորված է: Բնակարանում գտան ճայթող ուսմանը, մի օրինակ յեղափոխական պրօկլամացիայի կատարված եղեռնագործութեան աստիճանաւորներին: «Новое Время» լրագիրը աւելացնում է որ ճայթիւնի ժամանակ մեռաւ 14 տարեկան Նիկոլայ Մակսիմով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 87 կ., երկրորդ 93 ռ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ., 25 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 223 ռ. 5 կ., երկրորդ 215 ռ., 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 37 կ., երկրորդ 92 ռ. 50 կ., երկրորդ 7 ռ. 87 կ.: Ռուսաց 1 ռ. 1օնգոնի վրա արժէ 24.90 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 213 մարկ, փարիզի վրա 264 ֆրանկ: Բօրայի տրամադրութիւնը հանգարտ է: Վաղը և միւս օրը բօրան փակված կը լինի:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՆԻ